

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2021 [3]
ԵՐԵՎԱՆ



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ բիզնես վարչարարության ամբիոնի դոցենտ

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Աղքատությունն ինքնին ցավալի երևույթ է, որն իր հետ ծնում է բազմաթիվ բարդ հիմնախնդիրներ՝ սոցիալական, տնտեսական, հոգեբանական տեսանկյուններից: Ամբողջ աշխարհը պայքարում է այս երևույթի դեմ, որի ամենախոցելի տեսակը մանկական աղքատությունն է: Առ այսօր աշխարհում չկա գեթ մի երկիր, որը գտած լինի դրա հիմնովին վերացման «դեղատոմսը»: Զարգացած երկրներին հաջողվում է որոշակի ժամանակահատվածներում ակտիվ սոցիալական ծրագրերի միջոցով նվազեցնել աղքատության (այդ թվում՝ մանկական) մակարդակը, պարբերաբար գրանցել հաջողություններ, ձեռք բերել ցանկալի արդյունքներ, սակայն որոշ ժամանակ անց այդ ցուցանիշը կարող է փոքր գործոնների ազդեցության ներքո կրկին բարձրանալ: COVID-19-ը դրա փաստացի ապացույցն է: Զարգացող երկրներում ամեն ինչ շարժվելի բարդ է: Ֆինանսական ռեսուրսների սղություն, կրթական, առողջապահական, սոցիալական պաշտպանության անկատար համակարգեր, գործազրկության բարձր մակարդակ, պատերազմներ, համաճարակներ, աղետներ և այլն: ՀՀ-ն այս առումով բացառություն չէ. մեր երկիրը տեսել է և՛ ավերիչ երկրաշարժ, և՛ արցախյան պատերազմներ, համավարակ և այլն, ինչի հետևանքով ՀՀ-ում դեռևս շարունակում է բարձր մնալ աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակը: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2019 թ. յուրաքանչյուր երրորդ երեսխան եղել է աղքատ, ինչը մտահոգիչ ցուցանիշ է:

Հիմնաբառեր. մանկական աղքատություն, համավարակ, զրկանքներ, բազմաչափ ու նյութական աղքատություն, ծայրահեղ աղքատներ, սոցիալական բացառում, կենսապայմաններ

JEL: I32, P46

DOI: 10.52174/1829-0280_2021_3_74

Ներածություն: Ցավալի փաստ է, որ դեռևս 21-րդ դարում աշխարհում կիրառվում է «մանկական աղքատություն» եզրույթը: Աղքատության մեջ մեծացող երեխաները հաճախ ունենում են սննդի, հիգիենայի պարագաների, կացարանի, առողջապահության, կրթության, մշակութային, սպորտային ծառայությունների պակաս, և նրանց համար անհոգ մանկությունը վերածվում է զրկանքներով լի փորձության:

Անկախացումից ի վեր ՀՀ-ում աղքատության հաղթահարումը եղել և շարունակում է մնալ ՀՀ Կառավարության օրակարգային հիմնահարցերից մեկը, քանի որ մշտապես ունեցել է բարձր մակարդակ: Տարբեր ժամանակահատվածներում ՀՀ կառավարություններն իրականացրել են մի շարք սոցիալական ծրագրեր աղքատությունը, այդ թվում՝ մանկական աղքատությունը հաղթահարելու կամ գոնե մեղմելու ուղղությամբ, սակայն դեռևս ոչ մի կառավարության չի հաջողվել գրանցել շոշափելի արդյունք: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ ԱՐՄՍՍՍ) տվյալների՝ 2019 թ. ՀՀ-ում մանկական աղքատության մակարդակը կազմել է 33.6%, ընդ որում՝ աղքատ է 0-18 տարեկան աղջիկների 33.4%-ը, տղաների՝ 33.7%-ը, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 2.3%, այդ թվում՝ աղջիկների՝ 2.8%-ը, տղաների՝ 1.8%-ը¹: Հաշվի առնելով COVID-19 համավարակի և արցախյան պատերազմի հետևանքները՝ կարծում ենք, որ ՀՀ-ում մանկական աղքատության բարձր ցուցանիշը դեռևս երկար ժամանակ կպահպանվի, եթե գործուն և արմատական փոփոխություններ չիրականացվեն սոցիալական պաշտպանության համակարգում:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել մանկական աղքատության դրսևորումները ՀՀ-ում և արտասահմանյան երկրներում, իրականացնել մանկական ընդհանուր և ծայրահեղ աղքատության մակարդակների հաշվարկ 2019 թ. համար՝ ըստ ք.Երևանի և ՀՀ մարզերի (ԱՐՄՍՍՍ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագրքոված միկրոտվյալների բազայի հիման վրա), ինչպես նաև առաջարկել ՀՀ-ում մանկական աղքատության հիմնախնդրի մեղմման հնարավոր ուղիներ:

Գրականության ակնարկ: Մանկական աղքատությունը համընդհանրորեն ճանաչված խոչընդոտ է կայուն տնտեսական ու սոցիալական զարգացման համար: Կան բազմաթիվ փաստեր մանկական աղքատության և անհատական ու սոցիալական ռիսկերի միջև սերտ կապի մասին: Եթե երեխաներն երկար ժամանակ կրում են զրկանքներ, ապա տարիներ անց դրանց հետևանքները բացասական ազդեցություն են ունենում ոչ միայն այդ անձանց, այլ նաև հասարակության մյուս անդամների, տնտեսության և ապագա սերունդների վրա²: Աղքատությունն իր հետ ծնում է հիասթափություն և հուսալքություն՝ թուլացնելով համամարդկային արժեքները:

¹ Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2020 թ., Վիճակագրական-վերլուծական գեկոյց, ԱՐՄՍՍՍ, Եր., 2020, էջ 61:

² Տե՛ս Детская бедность в Европе и Центральной Азии: определения масштабов, тенденции и рекомендации, ЮНИСЕФ, декабрь 2017, էջ 9, <https://www.unicef.org/eca/media/3401/file/Child-poverty-regional-report-russian.pdf>.

Մանկական աղքատությունը սովորաբար տարբերվում է մեծահասակների աղքատությունից, քանզի կարող է ունենալ տարբեր պատճառներ և հետևանքներ: Չրկանքների անգամ կարճ ժամանակահատվածները կարող են բացասական ազդեցություն թողնել երեխաների աճի և զարգացման վրա՝ երկարաժամկետ կտրվածքով³: Քանի որ մարդկային զարգացումը բազմաչափ, փոխկախված գործընթաց է, մանկական աղքատության կենսաբանական հետևանքներն անմիջական ազդեցություն ունեն ուղեղի, ճանաչողական զարգացման և ձեռքբերումների վրա: Բազմաթիվ տնտեսագետներ, սոցիոլոգներ, հոգեբաններ և նյարդաբաններ ընդգծում են, որ աղքատությունը կարող է տարբեր ուղիներով ազդել երեխաների զարգացման վրա⁴:

Աղքատ ընտանիքների երեխաներն ունեն կյանքի ծախսողման առավել մեծ ռիսկ. քրեական միջավայրում հայտնվելը, առողջական խնդիրները՝ անբավարար սննդի պատճառով, կարիերայի հեռանկարների նվազումը՝ առավել բարեկեցիկ ընտանիքների երեխաների համեմատությամբ: Մասնագիտական գրականության մեջ մանկական աղքատության և վարքագծի վերաբերյալ չկան միասնական մոտեցումներ: Այս հարցը վիճելի է այն առումով, որ հետազոտողների մի մասը նշում է, որ մանկական աղքատությունը նպաստում է ագրեսիային, հանցագործությունների մեջ ներգրավմանը, հանգեցնում է ինքնասպանությունների, իսկ մյուս մասը համաձայն չէ այդ տեսակետին⁵: Մանկական աղքատությունը երկարաժամկետ բացասական հետևանքներ է թողնում նաև տնտեսության վրա: Միևնույն ժամանակ, երեխաներն իրենք են դառնում աղքատության առաջացման պատճառներից մեկը. երբ ընտանիքում ծնվում է երեխա, ընտանիքի կարիքները մեծանում են, իսկ եկամուտը՝ ոչ⁶:

Սակայն մանկական աղքատությունը վեր է ցածր եկամուտների և ցածր գնողունակության հիմնախնդրից և արտացոլում է ավելի դրամատիկ երևույթներ. կենսակերպի ընտրության ու հետագա զարգացման հնարավորությունների բացակայություն: Մանկությունը համարվում է հնարավորությունների եզակի պատուհան, որտեղ դրվում է ապագա հաջողությունների, կամ հակառակը՝ հասուն տարիքում անդառնալի բացասական հետևանքներ:

³ Տե՛ս **Minuji A., Delamonica E., Davidzuk A. and Gonzalez E.**, The Definition of the Child Poverty: a discussion of concepts and measurements; Environment & Urbanization Copyright © 2006 International Institute for Environment and Development, Vol. 18(2), էջ 481-500, <https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/0956247806069627>, էջ 483:

⁴ Տե՛ս A Roadmap to Reducing Poverty (2019), Greg Duncan and Suzanne Le Menestrel, Editors Board on Children, Youth, and Families and Committee on National Statistics Division of Behavioral and Social Sciences and Education; A Consequences Study Report of the National Academies of Sciences. Engineering. Medicine, Part 3: Consequences of Child Poverty; The National Academic press Washington, DC, https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK547361/pdf/Bookshelf_NBK547361.pdf

⁵ Տե՛ս **Gripps J., Walker R.**, The Costs of Child Poverty for Individuals and Society, A Literature Review, Joseph Rowntree Foundation, October 2008, https://www.jrf.org.uk/sites/default/files/jrf/migrated/files/2301-child-poverty-costs.pdf?fbclid=IwAR1iYV9VhF6ypfWzTwDY9ic1w9nOHm3hZu8_Z4vz59SflT82z1x4MnvxAs

⁶ Տե՛ս **Дуэль А.**, Минимум по бедности. Сколько стоит победить нищету в России, <https://rg.ru/2020/07/26/elena-grishina-edinstvennyj-sposob-preodoleniia-bednosti-povysheniye-dohodov-grazhdan.html>

րի հիմքը⁷: Բազմաթիվ ապացույցներ կան մանկական աղքատության ու կրթության վատ արդյունքների փոխկապվածության մասին: Ընտանիքի անցած կրթական ուղին ակադեմիական հաջողության ամենակարևոր կանխորոշիչն է: Ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններում ապրող երեխաներն ունեն ավելի ցածր կրթական նկրտումներ, և ավելի հավանական է, որ նրանք կունենան վերականգնողական օգնության կամ հատուկ կրթության կարիք⁸: Աղքատության մեջ մեծացող երեխաները ենթարկվում են ավելի մեծ ռիսկի՝ դառնալ գործազուրկ, աղքատ և սոցիալապես մեկուսացված:

Մասնագիտական գրականության մեջ աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության սահմանման, բնորոշման ու չափման վերաբերյալ միասնական մոտեցում չկա: Հատկապես երեխաների պարազայում աղքատության չափումը պետք է կատարվի ոչ միայն դրամական (նյութական) մոտեցման համատեքստում, այլև ունենա բազմաչափ գնահատման մոդել: Երկրների մեծ մասը և միջազգային մի շարք վիճակագրական գործակալություններ իրականացնում են ինչպես նյութական (իր երկու տարատեսակներով, մասնավորապես, հարաբերական՝ հիմնված երկրի մեդիան եկամտի որոշակի տոկոսի վրա, և բացարձակ՝ տնային տնտեսությունների որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունը), այնպես էլ բազմաչափ (երբ հաշվի են առնվում սոցիալական բարեկեցությունը բնորոշող մի շարք ցուցիչներ՝ կրթության, առողջապահության, բնակարանային, սանիտարահիգիենիկ պայմանները և այլն) աղքատության մակարդակի գնահատումներ:

Զարգացած երկրների մեծ մասում կիրառվում է «հարաբերական աղքատություն» հասկացությունը: Հարաբերական աղքատության հաշվարկն առնչվում է սոցիալական բացառման հասկացությանը, որը 1985 թ. ընդունվեց Եվրոպական տնտեսական համայնքի կողմից⁹:

Ի տարբերություն զարգացած երկրների մեծամասնության՝ ԱՄՆ-ում 1963 թ-ից կիրառվում է բացարձակ աղքատության ցուցանիշը¹⁰:

Ընտանիքներն ու անհատներն աղքատ են, եթե առկա ռեսուրսները բավարար չեն նրանց կարիքները հոգալու համար: Այլ կերպ ասած՝ աղքատությունն անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև դրանց բավարարման ֆինանսական ու այլ միջոցների պակասն է: Այնուամենայնիվ, բարդ խնդիր է հստակեցնել, թե ինչ ապրանքներ և ծառայություններ են անհրաժեշտ, և ինչպես գնահատել առկա ռեսուրսները՝ կարիքները բավարարելու համար:

⁷ St' u Children at Risk of Poverty or Social Exclusion, Eurostat, Statistics Explained, data extracted in October 2020, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Children_at_risk_of_poverty_or_social_exclusion#Children_growing_up_in_poverty_and_social_exclusion

⁸ St' u **Gripps J., Walker R.**, նշվ. աշխ.:

⁹ St' u **Huston A.**, Children in Poverty: Can public policy alleviate the consequences? Fam Matters. 2011(87), էջ 13-26,

<https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3287293/?fbclid=IwAR0b5110810VpqAVYVWZaAMk1o63kBJbbGb5C3SNoM4r8WIK-vXnFwinTjA>

¹⁰ St' u նույն տեղը:

Մանկական աղքատությունը կարելի է սահմանել որպես անապահով ընտանիքներում ապրող երեխաների կենսապայմաններ, երբ նրանք մեծանում են գոյության համար անհրաժեշտ սուղ միջոցներով և/կամ գոյություն չունեցող ռեսուրսներով¹¹:

Մանկական աղքատության հետազոտման և քաղաքականության կենտրոնն առաջարկել է մանկական աղքատության հետևյալ սահմանումը. ««Մանկական աղքատությունը» նշանակում է, որ երեխաներն ու երիտասարդները մեծանում են առանց փարբեր փեսակի ռեսուրսների հասանելիության, որոնք կենսական նշանակություն ունեն նրանց բարեկեցության և ներուժն իրացնելու համար: Ռեսուրսներ ասելով նկատի են առնվում փնտրեսական, սոցիալական, մշակութային, ֆիզիկական, բնապահպանական և քաղաքական ռեսուրսները»¹²:

Խոսելով մանկական աղքատության առաջացման պատճառների մասին՝ պետք է նշել, որ աղքատության պատճառների վերաբերյալ տեսությունները դասակարգվում են երկու խմբում՝ սոցիալական ընտրություն և սոցիալական պատճառահետևանքային կապ¹³:

Համաձայն սոցիալական ընտրության վարկածի՝ անհատներին հաջողվում կամ չի հաջողվում բարձրանալ տնտեսական «սանդուղքով» հիմնականում հմտությունների, կարողությունների, շահադրժման, մտավոր ու ֆիզիկական առողջության պատճառով: Վերոնշյալ տեսությունը նախատեսված է ոչ թե կարճաժամկետում աղքատությունը նվազեցնելու, այլ դրա որոշ ազդեցությունները երեխաների մտավոր, վարքային և առողջական խնդիրների վրա վերացնելու համար՝ նպատակ հետապնդելով նվազեցնելու հաջորդ սերնդի աղքատության հավանականությունը:

Համաձայն երկրորդ վարկածի՝ տնտեսական և սոցիալական ինստիտուտներն ու կառույցներն առաջարկում են հնարավորություններ և խոչընդոտներ, որոնք հանգեցնում են հարստության կամ աղքատության: Քաղաքականության վերոնշյալ մոտեցումը նախատեսված է ընթացիկ ժամանակահատվածում ընտանիքներում աղքատությունը նվազեցնելուն՝ ծնողների զբաղվածության մակարդակի բարձրացման միջոցով:

Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները հետևողականորեն ցույց են տվել, որ միայն աշխատանքը չի կարող ընտանիքներին դուրս բերել աղքատությունից, և ոչ էլ միայն նպաստների, սոցիալական օժանդակության այլ ծրագրերի միջոցով է դա հնարավոր:

Մանկական աղքատությունը ծագում և սրվում է պատերազմներից, բնական աղետներից, ընտանիքների քայքայումից, դպրոցների, հիվանդանոցների, սննդի, մաքուր ջրի, երեխաների սոցիալական պաշտպանության համակարգի, զբաղվածության հնարավորությունների պակասից, ավանդական մշակույթի կորստից, համաշխարհային տնտեսական ճգնաժամներից, հաշմանդամությունից, խտրականությունից և այլ գործոնների ազդեցություն-

¹¹ Տե՛ս [https://canadianfeedthechildren.ca/the-feed/child-poverty-causes-and-effects/?fbclid=IwAR08r\)U8oxWRdela1oKk0m0NP7NBQZJkks8n90SYu8aQsbBBT6luA_u8W_40](https://canadianfeedthechildren.ca/the-feed/child-poverty-causes-and-effects/?fbclid=IwAR08r)U8oxWRdela1oKk0m0NP7NBQZJkks8n90SYu8aQsbBBT6luA_u8W_40)

¹² Minuji A., Delamonica E., Davidzuk A. and Gonzalez E., նշվ. աշխ., էջ 487:

¹³ Տե՛ս Huston A., նշվ. աշխ.:

նից¹⁴: Դա կարող է կրճատվել պատշաճ կրթության և վերապատրաստման, աշխատանքի ապահովման, առողջապահության, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման, պարենային ռեսուրսների հավասար բաշխման, սոցիալական աջակցության արդյունավետ ծրագրերի և այլ համակարգային միջոցառումների շնորհիվ¹⁵:

Ըստ գնահատականների՝ յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլարը, որը երկիրն ընթացիկ ժամանակահատվածում ծախսում է մանկական աղքատության կրճատման նպատակով, ապագայում կխնայի առնվազն 7 ԱՄՆ դոլար՝ աղքատության հաղթահարման տնտեսական ծախսերում¹⁶:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (այսուհետ՝ ՅՈՒՆԻՍԵՖ) գնահատումների՝ մինչհամավարակային ժամանակահատվածում գրեթե 1 միլիարդ երեխա ապրում էր բազմաչափ աղքատության պայմաններում: Բացի այդ, 2020 թ. սեպտեմբերի տվյալներով բազմաչափ աղքատ երեխաների թիվն ավելացել է գրեթե 150 մլն-ով՝ պայմանավորված COVID-19 համավարակի հետևանքներով: Ըստ տարբեր գնահատականների՝ գրեթե 356 մլն երեխա ապրում է ծայրահեղ աղքատության պայմաններում՝ կենսապահովման համար ունենալով օրական 1.90 ԱՄՆ դոլարից պակաս միջոց¹⁷: Զարգացող երկրներում երեխաների շրջանում կանխատեսվում է մոտ 15% աղքատության աճ¹⁸: Բացի այդ, կանխատեսվում է, որ 2021 թ. վերջին, 2019 թ. համեմատությամբ, ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում մանկական աղքատության մակարդակը (նյութական աղքատությունը) կաճի 13-24%-ով¹⁹:

COVID-19-ի սոցիալ-տնտեսական առաջնային ազդեցություններից մեկը ընտանիքների եկամտի աղբյուրների կորուստն է և այդ ընտանիքներում ապրող երեխաների՝ առավել խոցելի աղքատության մեջ հայտնվելը՝ զրկելով նրանց իրենց հիմնական պահանջմունքներից: Ծայրահեղ աղքատ ընտանիքների համար, ներառյալ նրանց, ովքեր ընդգրկված չեն սոցիալական

¹⁴ Տե՛ս <https://www.childfund.org.au/stories/causes-child-poverty/?fbclid=IwAR3deDKWUnAz414cUfQ3TStNwtfsrEc3Hzybl0L3hhr2T7x26Y012DcG5Y>

¹⁵ Տե՛ս https://canadianfeedthechildren.ca/the-feed/child-poverty-causes-and-effects/?fbclid=IwAR08rU8oxWRdela1oKk0m0NP7NBQZJkks8n90SYu8aQsbBBT6IuA_u8W_40, <https://www.childfund.org.au/stories/how-can-we-help-reduce-child-poverty-overseas/>, https://www.concernusa.org/story/causes-of-poverty/?fbclid=IwAR2MA0TrNVbcbWNc-zivV-J7gNrfWe70k6kWA9B9pbsxLCEp07UO5Y_M

¹⁶ Տե՛ս **McLaughlin M., Rank M. R.**, Estimating the Economic Cost of Childhood Poverty in the United States Social Work Research, Volume 42, Issue 2, June 2018, էջ 73–83, <https://doi.org/10.1093/swr/svy007>

¹⁷ Տե՛ս <https://www.unicef.org/social-policy/child-poverty>

¹⁸ Տե՛ս <https://www.unicef.org/armenia/%D5%B4%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B4%D5%AB%D6%81-%D5%B4%D5%A5%D5%AF-%D5%BF%D5%A1%D6%80%D5%AB-%D5%A1%D5%B6%D6%81-%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D6%80%D6%87%D5%B8%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6>

¹⁹ Տե՛ս **Fiala O., Delamónica E., Escaroz G.** et al., Children in Monetary Poor Households: Baseline and COVID-19 Impact for 2020 and 2021. EconDisCliCha 5, էջ 161-176 (2021), <https://doi.org/10.1007/s41885-021-00086-3>, էջ 174:

պաշտպանության համակարգի որևէ բաղադրիչում, իրավիճակն ավելի ծանր է²⁰: Այս զարգացումները բացասաբար են անդրադառնում երեխաների վրա և կարող են հանգեցնել նվազագույն կենսամակարդակի նրանց իրավունքի խախտմանը:

ԵՄ անդամ երկրներում դեռևս 2007-2008 թթ. սկսված տնտեսական ճգնաժամի հետևանքով աճել է մանկական ինչպես նյութական, այնպես էլ բազմաչափ աղքատության ցուցանիշը: ՅՈՒՆԻՍԵՖ-ի 2014 թ. զեկույցի համաձայն՝ ԵՄ անդամ 30 երկրներում 2012 թ., 2008 թ. համեմատությամբ, 1.6 մլն-ով ավելացել է ծանր նյութական զրկանքներով ապրող երեխաների թիվը (ընդհանուր առմամբ ներառելով 11.1 մլն երեխա): Երեք տարի անց յուրաքանչյուր երրորդ եվրոպացի երեխան կրել է երկու կամ երեք զրկանքներ՝ սննդի, հագուստի, կրթական ռեսուրսների, ժամանցի, հասարակական գործունեության, տեղեկատվության հասանելիության կամ կացարանի հետ կապված:

2010-2019 թվականներին երեխաների համար աղքատության (կամ սոցիալական բացառման) ռիսկը ԵՄ անդամ 27 երկրներում կրճատվել է 4.8 տոկոսային կետով՝ 27,3%-ից մինչև 22,5%²¹:

Ֆրանսիան շարունակում է մնալ աղքատության ամենացածր մակարդակ ունեցող եվրոպական երկրներից մեկը: Այնուամենայնիվ, վերջին տասը տարիների ընթացքում Ֆրանսիայում աղքատների թիվն աճել է՝ 2018 թ. հասնելով ավելի քան 9 միլիոն մարդու (ընդհանուր բնակչության 14%-ից ավելին): COVID-19-ը, ինչպես այլ երկրների պարագայում, հիմնականում ազդել է երիտասարդների և կանանց աղքատության մակարդակի վրա²²:

Մեծ Բրիտանիայում մինչ համավարակը 14.5 միլիոն մարդ կամ քաղաքացիներից յուրաքանչյուր 4-5-ը համարվում էին աղքատ (բնակարանային ծախսերը հաշվի առնելով): 2019-2020 թթ. երկրում աղքատ էին 4.3 միլիոն երեխա կամ երեխաների 31%-ը: Աղքատության մակարդակը բարձր է երեխաներ ունեցող և միայնակ ծնողներով ընտանիքների շրջանում: Այսպես՝ միայնակ ծնողների պարագայում աղքատ է համարվել երեխաների 49%-ը: Երեխաների՝ աղքատության պայմաններում ապրելու հավանականությունն առավել մեծ է սևամորթ և էթնիկ փոքրամասնությունների պարագայում: Նշված խմբերում աղքատ է երեխաների 46%-ը, այն դեպքում, երբ բնիկ բրիտանական ընտանիքներում աղքատ է երեխաների 26%-ը: Մեծ Բրիտանիայում աշխատանքը ևս չի համարվում աղքատությունից դուրս գալու երաշխավորված միջոց, կամ, այլ կերպ ասած՝ խզվել է աշխատանքի և բարեկեցության կապը²³: Աղքատության մեջ մեծացող երեխաների 75%-ն ապրում է

²⁰ Տե՛ս <https://data.unicef.org/topic/child-poverty/covid-19/>

²¹ Տե՛ս Children at Risk of Poverty or Social Exclusion, Eurostat, Statistics Explained, data extracted in October 2020, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Children_at_risk_of_poverty_or_social_exclusion#Children_growing_up_in_poverty_and_social_exclusion


²² Տե՛ս National Poverty Watch Report 2020; European Anti-Poverty Network France, 14 September 2020; https://www.eapn.eu/wp-content/uploads/2020/10/EAPN-EAPN-France-Poverty-Watch-2020_EN_final-4706.pdf, էջ 7:

²³ Տե՛ս **Westwater H.**, UK Poverty: the facts, figures and effects, July 1, 2021, <https://www.bigissue.com/latest/uk-poverty-the-facts-figures-and-effects/>

տնային տնտեսություններում, որտեղ աշխատանքով ապահովված է առնվազն մեկ մարդ²⁴:

2018 թ. տվյալներով ԱՄՆ-ում մանկական աղքատության մակարդակը կազմել է 16.2%²⁵: Ըստ ԱՄՆ-ի մարդահամարի տվյալների՝ 2019 թ. ավելի քան 10 միլիոն երեխա կամ յուրաքանչյուր 7-ից գրեթե 1-ը (14,4%) ապրում էր աղքատության մեջ: Երեխաների աղքատության մակարդակը մեկուկես անգամ ավելի բարձր է, քան 18-64 տարեկան մեծահասակներինը (9,4%) և 65 ու բարձր տարիքի մեծահասակներինը (8,9%): Աղքատ երեխաների ավելի քան երկու երրորդը (70.1%) ունեցել է ընտանիքի առնվազն մեկ աշխատող անդամ, որն աշխատել է 2019 թ., իսկ մեկ երրորդից ավելին (33.7%) ունեցել է ընտանիքի առնվազն մեկ աշխատող անդամ՝ լրիվ աշխատաժամանակով աշխատող²⁶:

2018 թ. տվյալներով Ռուսաստանի Դաշնությունում յուրաքանչյուր 5-րդ երեխան ապրել է կենսապահովման նվազագույնից ցածր եկամուտներ ունեցող ընտանիքում: Գրանցված ցուցանիշն առավել ցածր է, քան նախորդ տարիներին, սակայն փորձագետները նշում են, որ համավարակի պատճառով մանկական աղքատությունն աճում է²⁷: Ըստ Ռուսաստանի 2018 թ. տվյալների՝ ՌԴ-ում ապրող երեխաների (մինչև 18 տարեկան) գրեթե 23%-ն ապրել է կենսապահովման նվազագույնից ցածր եկամտով: Նույն աղբյուրի վկայակոչմամբ՝ երեխաների շրջանում աղքատության մակարդակը գրեթե երկու անգամ գերազանցում է ազգային ցուցանիշը. ընդհանուր առմամբ, 2018 թ-ի վերջին 18,4 միլիոն մարդ կամ բնակչության 12,6%-ը ապրում էր աղքատության շեմից ցածր մակարդակում՝ ներառյալ երեխաները (զծապատկեր 1):



Գծապատկեր 1. Մանկական աղքատության մակարդակը ՌԴ-ում, 2013-2018 թթթ. (%)²⁸

²⁴ Տե՛ս <https://cpag.org.uk/child-poverty/child-poverty-facts-and-figures>

²⁵ Տե՛ս Children’s defense fund; <https://www.childrendefense.org/policy/resources/soac-2020-child-poverty-tables/>

²⁶ <https://www.childrendefense.org/state-of-americas-children/soac-2021-child-poverty/>

²⁷ <https://www.rbc.ru/economics/04/08/2020/5f27c9789a794792daa29177>


²⁸ Տե՛ս <https://www.rbc.ru/economics/04/08/2020/5f27c9789a794792daa29177>

Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 1-ը, թեև ՌԴ-ում 2018 թ., 2017 թ. համեմատությամբ, մանկական աղքատության մակարդակը նվազել է 3.1 տոկոսային կետով, սակայն դեռևս չի հասել 2013 թ. մակարդակին:

Ղազախստանում 2019 թ. աղքատության մակարդակը կազմել է 4,3% կամ գրեթե 800 հազար մարդ²⁹: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի գնահատականների՝ յուրաքանչյուր 6-րդ ղազախ երեխան (15.6%-ը) կամ գրեթե 1 մլն երեխա ապրում է կենսապահովման ցածր մակարդակ ունեցող ընտանիքում:

Արդգստանում 2019 թ. մանկական աղքատության մակարդակը կազմել է 25.7%, որը 5.6 տոկոսային կետով գերազանցել է ընդհանուր աղքատության մակարդակը: Ցուցանիշները 2016-2017 թթ. համեմատությամբ ունեցել են որոշակի բարելավում (2016 թ. ընդհանուր աղքատության մակարդակը կազմել է 25.4%, իսկ մանկական աղքատությունը՝ 31.5%, ինչ վերաբերում է 2017 թ., ապա ընդհանուր աղքատության մակարդակը կազմել է 25.6%, իսկ մանկական աղքատությունը՝ 32%), սակայն կանխատեսվում է, որ հետքովիային ժամանակահատվածում ցուցանիշները կրկին կաճեն³⁰:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ մանկական աղքատությունը համընդհանուր երևույթ է (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Ազգային մեղիան եկամտի 60%-ից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններում բնակվող երեխաների մասնաբաժինը 2018 թ. (%)³¹

²⁹ Տե՛ս **Айтенова Ш.**, Дети не в приоритете: что не так в политике сокращения детской бедности в Казахстане?, <https://ekonomist.kz/aitenova/deti-politika-sokrashcheniya-detskoj-bednosti/>

³⁰ Տե՛ս Индекс детской бедности и лишений в Кыргызской Республике, Национальный статистический комитет Кыргызской Республики, <http://www.stat.kg/ru/publications/indeks-detskoj-bednosti-i-lishenij-v-kyrgyzskoj-respublike/>

³¹ Տե՛ս Worlds of Influence Understanding What Shapes Child Well-being in Rich Countries, UNICEF, 2020, <https://www.unicef.org/media/77571/file/Worlds-of-Influence-understanding-what-shapes-child-well-being-in-rich-countries-2020.pdf>

Միջազգային փորձի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ COVID-19-ի հետևանքով մանկական աղքատության մակարդակն աշխարհում բարձրանում է:

Հետազոտության մեթոդաբանություն: Մանկական աղքատության հիմնախնդիրների և դրանց դրսևորումների ուսումնասիրությունը ՀՀ-ում ուղեկցվել է միջազգային և հայրենական մասնագիտական գրականության համեմատական վերլուծությամբ, աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության ցուցանիշների հաշվարկման ընդունված մեթոդաբանության դիտարկմամբ (նյութական և բազմաչափ աղքատության տեսանկյունից): Հաշվի առնելով հոդվածի նպատակը՝ հիմնականում կիրառվել են համեմատական ուսումնասիրությունների, ընդհանուր գիտական վերլուծության, խմբավորումների, ընդհանրացումների մեթոդները:

Որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել ԱՐՄՍՍՍՍ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, Եվրոստատի, Համաշխարհային բանկի, Ռոսստատի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ու այլ կազմակերպությունների վիճակագրական տվյալները և դրանց շտեմարանները, պաշտոնական հրապարակումները և ոլորտում մասնագիտացված գիտական հետազոտությունները:

ԵՄ անդամ երկրներում մանկական աղքատության մակարդակի ընդհանուր ուսումնասիրությունն ու վերլուծությունը հիմնականում իրականացվել են ըստ 2007–2019 թթ. տվյալների (առանձին երկրների համար՝ 2018–2020 թթ.): Ռուսաստանի Դաշնությունում, Ղազախստանում և Ղրղզստանում մանկական աղքատության վերաբերյալ վիճակագրական տվյալների շարքը կարճ է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այս երկրներում մանկական աղքատության մակարդակը սկսել են հաշվարկել ու հրապարակել միայն վերջին տարիներին, իսկ ԱՊՀ անդամ որոշ երկրներում խնդրո առարկա ցուցանիշը նույնիսկ չի հաշվարկվում: Պետք է նշել, որ աղքատության (այդ թվում՝ մանկական) ցուցանիշի մշտադիտարկումը պահանջում է մեթոդաբանության ու տվյալների հավաքագրման գործընթացի պարբերական վերանայում, ինչը և իրականացվել է ԱՐՄՍՍՍՍ-ի կողմից: Հայաստանում աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը ներդրվել է 1996 թ., այնուհետև վերանայվել ու կատարելագործվել է 2004 թ., 2009 թ. և 2019 թ.³²:

Մի կողմից՝ սա դրական երևույթ է, երբ վերանայվում ու կատարելագործվում են մեթոդաբանությունները և աշխարհի մակարդակով ձեռք բերում համադրելիության բնույթ, մյուս կողմից՝ հետազոտողների, գիտնականների համար առաջացնում են լրացուցիչ բարդություններ՝ երկար ու համադրելի շարքեր չունենալու տեսանկյունից, որոնք անհրաժեշտ են խորքային հետազոտությունների իրականացման համար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հայաստանի համար աղքատության (այդ թվում՝ մանկական) մակարդակները հիմնականում ուսումնասիրված ու վերլուծված են 2009–2018 թթ. ժամանակահատվածի համար, իսկ 2019 թվականը դիտարկվել է առանձին՝ մեթոդաբանական փոփոխությամբ պայմանավորված: Բացի մանկական աղքատու-

³² Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական գեկոյց, ԱՐՄՍՍՍՍ, Եր., 2020, https://armstat.am/file/article/poverty_2020_a_1_.pdf

թյանն առնչվող պաշտոնական տվյալների վերլուծությունից, հետազոտության շրջանակում, օգտվելով ԱՐՄՍՍՍՍ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված միկրո-տվյալների բազայից (5165 տնային տնտեսություն), 2019 թ. համար հաշվարկվել են նաև Երևանի և ՀՀ մարզերի մանկական ընդհանուր և ծայրահեղ աղքատության մակարդակները՝ կիրառելով SPSS ծրագրային փաթեթը:

Վերլուծություն: 2003 թ. ՀՀ Կառավարությունը հաստատեց և Համաշխարհային բանկի աջակցությամբ սկսեց իրագործել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, որն այնուհետ՝ 2008 թ-ին, վերահաստատվեց որպես Կայուն զարգացման ծրագիր: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի հիմնական նպատակը նյութական աղքատության նշանակալի կրճատումն էր: Ծրագրով նախատեսվում էր աղքատության մակարդակը 2015 թ. հասցնել 19.7%-ի, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 4.1%-ի՝ 2001 թ. համապատասխանաբար՝ 50.9% և 16% ցուցանիշների փոխարեն³³: Սակայն 2008 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամից անմասն չմնաց նաև Հայաստանը, և 2009 թ. ՀՀ-ում գրանցվեց իրական ՀՆԱ 14.1% անկում: Տնտեսության վերականգնումը դանդաղ տեմպերով սկսվեց միայն 2010 թ-ից (2010 թ. ՀՆԱ հավելաճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 2.2%, իսկ 2011 թ.՝ 4.7%)³⁴: 2015 թ. ՀՀ-ում աղքատության մակարդակը արձանագրվել է 29.8%, ընդ որում՝ աղքատ էր բնակչության 19.4%-ը, շատ աղքատ՝ 8.4% և ծայրահեղ աղքատ՝ 2%-ը³⁵: Ինչպես տեսնում ենք, 2015 թ. համար Կառավարության կողմից սահմանված ուղենիշը վերոնշյալ պատճառներով չէր իրագործվել:

Աղքատության կրճատումն ավելին է, քան բարեգործությունը կամ բարոյական պարտավորությունը. դա պետության իրավական պարտավորությունն է: Քաղաքացիներն իրավունք ունեն իրենց կառավարություններից պահանջելու վարել այնպիսի քաղաքականություն, որը կբարելավի նրանց կենսամակարդակը³⁶: Երեխաների աղքատությունը երեխաների իրավունքների խախտման հավանական հիմքն ու սկզբնաղբյուրն է³⁷:

ՀՀ-ն, որդեգրելով սոցիալական և իրավական պետություն լինելու տեսլականը, Սահմանադրության մի շարք հոդվածներով ամրագրում է բնակչության բարեկեցության գաղափարախոսությունը (այն է՝ պետական քաղաքականության միջոցով ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարության ապահովում) և սոցիալական ապահովության իրավունքը (յուրաքանչյուր ոք ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշ-

³³ Տե՛ս ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշման հավելված, Կայուն զարգացման ծրագիր, Եր., էջ 26:

³⁴ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական գեկոյց, ԱՐՄՍՍՍՍ, Եր., 2016 թ., https://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf, էջ 30:

³⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 38:

³⁶ Տե՛ս **Minuji A., Delamonica E., Davidzuk A. and Gonzalez E.**, նշվ. աշխ., էջ 484:

³⁷ Տե՛ս **Nolan A.**, Protecting the Child from Poverty: The Role of Right in the Council of Europe, 2019, էջ 20, <https://rm.coe.int/protecting-the-child-from-poverty-the-role-of-rights-in-the-council-of/168098c54c>

խատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք)³⁸: Սահմանադրությամբ ամրագրված է նաև, որ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին³⁹: Որքան էլ վերոնշյալ շարադրանքը համապատասխանում է ՀՀ-ի կողմից միջազգայնորեն ստանձնած պարտավորություններին ու պետության հիմնարար առաքելություններին, այնուամենայնիվ, հիմնական հարցն այն է, որ աղքատության կամ ծայրահեղ աղքատության պայմաններում ապրող ընտանիքներն անգամ ցանկության պարագայում չեն կարող կատարել իրենց ծնողական ու սահմանադրորեն ամրագրված պարտավորությունները երեխաների հանդեպ: Անապահով ընտանիքում ծնված յուրաքանչյուր երեխա ի սկզբանե դատապարտված է աղքատության ու զրկանքների:

ՀՀ Սահմանադրությամբ շատ հստակ է սահմանված կրթության իրավունքը, համաձայն որի՝ ՀՀ-ում պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է⁴⁰, ինչը հնարավորություն է ընձեռում բոլոր երեխաներին ստանալու առնվազն միջնակարգ կրթություն:

Երեխայի բարեկեցիկ մանկության ապահովման սկզբունքն ամրագրված է նաև Երեխայի իրավունքների մասին հռչակագրում, որը Հայաստանը վավերացրել է դեռևս 1992 թ.: Այստեղ սահմանվում է երեխաների՝ արժանավայել կենսապայմաններ ունենալու իրավունքը, ինչը կնպաստի նրանց ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացմանը: Բացի այդ, ամրագրված են նաև երեխայի՝ բժշկական օգնություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն ստանալու և այլ իրավունքներ:

Գոյություն ունի սերտ կապ մանկական աղքատության և երեխաների իրավունքների միջև, որն արտացոլված է նաև ԵՄ հանձնաժողովի Սոցիալական իրավունքների եվրոպական հենասյան 11-րդ սկզբունքում, այն է՝ երեխաներն ունեն աղքատությունից պաշտպանվելու իրավունք⁴¹:

Յուրաքանչյուր հասարակությունում երեխաները, կենսաթոշակառուների հետ միասին, առավել խոցելի ժողովրդագրական խմբերն են, և ըստ վերջիններիս սոցիալական դիրքի կարելի է դատել հասարակության զարգացման մակարդակի մասին: Սակայն, ի տարբերություն կենսաթոշակառուների, երեխաները ենթակա են աղքատության առավել բարձր ռիսկի: Մանկական աղքատության մակարդակը երկրի սոցիալական բարեկեցության հիմնական ցուցանիշներից մեկն է: Եթե հասարակությունում աղքատ երեխաների թիվը տարեցտարի աճում է, ապա դա վկայում է երկրում տնտեսական ու սոցիալական իրավիճակի վատթարացման մասին՝ անկախ առանձին ոլորտներում գրանցված հաջողություններից⁴²:

2008–2018 թթ. ժամանակահատվածում ՀՀ-ում մանկական աղքատության ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2011 թ.՝ 41.9% (աղյուսակ 1):

³⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, փոփ. 2015 թ., հոդված 11 և հոդված 83, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=102510>

³⁹ Տես նույն տեղը, հոդված 36, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=102510>

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, հոդված 38, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=102510>

⁴¹ Տե՛ս Nolan A., նշվ. աշխ., էջ 22:

⁴² Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական զեկոյոյ, ԱՐՄՍՍՍՏ, Եր., 2002, https://www.armstat.am/file/article/axqat_02arm_2.pdf, էջ 40:

**ՀՀ-ում մանկական աղքատության ցուցանիշների դինամիկան
2008–2018 թթ.*, 2019 թ.** (%)⁴³**

Տարեթիվ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ (վերին գիծ)
2008	1.6	29.8
2009	3.8	35.7
2010	3.7	41.4
2011	4.7	41.9
2012	3.3	36.2
2013	3.3	37.3
2014	3.3	34.0
2015	2.5	33.7
2016	2.0	34.2
2017	2.1	30.8
2018	1.5	29.2
2019**	2.3	51.7

* Համադրելիության բերելու նկատառումով 2008 թ. ցուցանիշները վերահաշվարկվել են ըստ 2009 թ. կիրառված մեթոդաբանության:

** Ցուցանիշները հաշվարկվել են ՏՏԿԱՀ 2019 թ. հիման վրա վերանայված աղքատության գնահատման մեթոդաբանությամբ:

Աղյուսակ 1-ի տվյալները փաստում են, որ ՀՀ-ն, իր վրա կրելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները, գրանցել է մանկական աղքատության մակարդակի բարձրացում. 2008 թ. համեմատությամբ 2009 թ. երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակն աճել է 2.4 անգամ և միայն 10 տարի անց՝ 2018-ին, 2008 թ. նկատմամբ մանկական ծայրահեղ աղքատության մակարդակն առաջին անգամ ունեցել է անկում՝ 0.1 տոկոսային կետով: Այլ կերպ ասած՝ 2018 թ. երեխաների 1.5%-ն ապրում էր ծայրահեղ աղքատության պայմաններում: Ինչ վերաբերում է մանկական աղքատության ընդհանուր մակարդակին, ապա 2009 թ., 2008 թ. համեմատությամբ, աճել է գրեթե 6 տոկոսային կետով, իսկ 2011 թ., ինչպես արդեն նշել ենք, արձանագրվել է վատթարագույն մակարդակը՝ 41.9%: 2018-ին, 2008 թ. համեմատությամբ, գրանցվել է մանկական աղքատության ընդհանուր մակարդակի 0.6 տոկոսային կետով անկում՝ կազմելով 29.2%: Համեմատության համար նշենք, որ 2018 թ. ծայրահեղ աղքատ և աղքատ էր հանրապետության բնակչության համապատասխանաբար 1.0 և 23.5%-ը⁴⁴: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ մանկական աղքատության մակարդակը, ինչպես աշխարհի մնացած երկրներում, բարձր էր բնակչության ընդհանուր աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակներից:

2019 թ. մանկական աղքատության ընդհանուր մակարդակը կազմել է 51.7% (ըստ վերին գծի) և 33.6% (ըստ միջին գծի), իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 2.3% (ըստ վերին, միջին գծերի), սակայն վերոնշյալ ցու-

⁴³ Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական գեկոյց, ԱՐՄՍՍՍՏ, Եր., 2020, https://armstat.am/file/article/poverty_2020_a_2_.pdf, էջ 61:


⁴⁴ Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական գեկոյց, ԱՐՄՍՍՍՏ, Եր., 2019, https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf, էջ 100:

ցանհիշները համադրելի չեն նախորդ ժամանակահատվածների ցուցանիշների հետ:

Մանկական աղքատության ցուցանիշներն էապես տատանվում են՝ կախված տնային տնտեսությունում երեխաների թվից, կրտսեր երեխայի տարիքային խմբից, ինչպես նաև տնային տնտեսության գլխավորի բնութագրիչներից, այդ թվում՝ սեռից, կրթական մակարդակից ու զբաղվածության կարգավիճակից: Բազմանդամ ընտանիքների երեխաների աղքատ լինելու հավանականությունն ավելի մեծ է: Մինչև 18 տարեկան երեք կամ ավելի երեխա ունեցող ընտանիքներում աղքատ է երեխաների 38.2%-ը (բոլոր երեխաների մեջ 29.2%-ի համեմատությամբ), իսկ ծայրահեղ աղքատ՝ երեխաների 2.7%-ը (բոլոր երեխաների 1.5%-ի համեմատությամբ)⁴⁵:

Մանկական աղքատության դրսևորումներն ըստ բնակավայրի առանձնահատկության ևս կրկնում են համաշխարհային միտումը: Այսպես՝ 2018 թ. քաղաքային բնակավայրերում բնակվող երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 1.7%՝ գյուղական բնակավայրերում բնակվող երեխաների 1.3%-ի համեմատությամբ, իսկ երեխաների ընդհանուր աղքատության մակարդակը՝ համապատասխանաբար 31.2%՝ 26.4%-ի համեմատությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գյուղաբնակ երեխաները հարկադրված են աշխատել՝ օգնելով մեծահասակներին գյուղատնտեսական աշխատանքներում, ինչն էականորեն ազդում է նաև նրանց կրթական իրավունքի իրացման վրա⁴⁶:

Մանկական աղքատության մակարդակն էապես տարբերվում է նաև ՀՀ մարզերում (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Մանկական ընդհանուր աղքատության մակարդակն ըստ երևանի և ՀՀ մարզերի, 2009–2018 թթ. (%)⁴⁷


⁴⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 101:

⁴⁶ Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական գեկույց, ԱՐՄՄՍՍՏ, Եր., 2002, https://www.armstat.am/file/article/axqat_02arm_2.pdf, էջ 42:

⁴⁷Կազմված է ըստ ԱՐՄՄՍՍՏ-ի տվյալների:

Գծապատկեր 3-ից երևում է, որ 2018 թ. մանկական աղքատության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Շիրակում՝ 46%, Լոռիում՝ 38.4% և Գեղարքունիքում՝ 31.7%: Համեմատության համար նշենք, որ 2009-ին վերոնշյալ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է՝ 52.4%, 48.3% և 45.2%: Գեղարքունիքի մարզում հաջողվել է 10 տարվա ընթացքում մանկական աղքատության մակարդակը նվազեցնել 13.5 տոկոսային կետով: 2018 թ. մանկական աղքատության ամենացածր մակարդակն արձանագրվել է Արագածոտնի մարզում՝ 15.4%:


Ինչ վերաբերում է երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակին (գծապատկեր 4), ապա 2009 թ. ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Կոտայքում՝ 7.7%, Շիրակում՝ 6.4% և Արմավիրում՝ 5.3%: Շուրջ 10 տարի անց Կոտայքի մարզում հաջողվել է իսպառ վերացնել երեխաների ծայրահեղ աղքատությունը, իսկ Արմավիրում՝ կրճատել 3.5 տոկոսային կետով: 2018 թ. տվյալներով երեխաների ծայրահեղ աղքատության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Լոռիում՝ 4.2% և Շիրակում՝ 3.4%: Վերոնշյալ մարզերում ցուցանիշները բարձր են եղել հանրապետական միջինից 2.7 և 1.9 տոկոսային կետերով:



Գծապատկեր 4. Մանկական ծայրահեղ աղքատության մակարդակն ըստ երևանի և ՀՀ մարզերի, 2009–2018 թթ. (%)⁴⁸


2019 թ. մանկական աղքատության ցուցանիշն ըստ մարզերի ԱՐՄՍՍՍՏ-ը չի հրապարակել: Օգտվելով ԱՐՄՍՍՍՏ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված միկրոտվյալների 2019 թ. բազայից՝ մենք հաշվարկել ենք Երևանի և ՀՀ մարզերի մանկական աղքատության մակարդակը (գծապատկեր 5): Ինչպես արդեն նշել ենք, 2019 թ. մանկական ընդհանուր աղքատության մակարդակը կազմել է 33.6%:

⁴⁸ Կազմված է ըստ ԱՐՄՍՍՍՏ-ի տվյալների:



Գծապատկեր 5. Մանկական աղքատության մակարդակն ըստ Երևանի և մարզերի, 2019 թ. (%)⁴⁹

Ըստ մեր կատարած հաշվարկների՝ մանկական աղքատության ամենաբարձր մակարդակն ավանդաբար (հաշվարկված այլ մեթոդաբանությամբ) արձանագրվել է Շիրակում՝ 64.8% (գրեթե 2 անգամ բարձր է մանկական աղքատության միջին մակարդակից), Արագածոտնի մարզում՝ հանրապետական միջինը գերազանցել է 1.6 անգամ, իսկ ամենացածրը Այունիքում՝ 16.4%: Այս ամենը լուրջ մտորումների առիթ է տալիս ու պահանջում հրատապ միջոցառումների ձեռնարկում և իրականացում՝ կրճատելով մանկական աղքատության մակարդակն առաջին հերթին վերոնշյալ մարզերում:



Գծապատկեր 6. Մանկական ծայրահեղ աղքատության մակարդակն ըստ Երևանի և մարզերի, 2019 թ. (%)⁵⁰

⁴⁹ Հաշվարկը կատարել են հեղինակները՝ ըստ ԱՐՄՍՍԱՏ-ի 2019 թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված միկրոտվյալների բազայի:

Մանկական ծայրահեղ աղքատության դրսևորումները 2019 թ. ըստ Երևանի և ՀՀ մարզերի դիտարկելիս կարելի է փաստել, որ միտումները գրեթե նույնական էին՝ ինչպես մանկական ընդհանուր աղքատության պարագայում (գծապատկեր 6): Սակայն, ի տարբերություն մանկական ընդհանուր աղքատության՝ Շիրակի մարզի «առաջնորդության», մանկական ծայրահեղ աղքատությունն առավել ընդգծված է Արագածոտնի մարզում (4.8%), որին հաջորդում է Գեղարքունիքի մարզը (4.2%):

Մանկական աղքատության միջին մակարդակի վրա իրենց ազդեցություն են թողնում կենսաթոշակի և ընտանեկան նպաստի մեծությունները: Սկսած 2009 թ-ից՝ ԱՐՄՍՍՍՍ-ը հաշվարկում և հրապարակում է կենսաթոշակի և նպաստների ազդեցությունը խնդրո առարկա ցուցանիշի վրա: 2009–2018 թթ. ժամանակահատվածի համար կենսաթոշակի, ընտանեկան և երեխայի նպաստների ազդեցությունները մանկական աղքատության ընդհանուր և ծայրահեղ մակարդակների վրա ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Մանկական աղքատության ընդհանուր և ծայրահեղ մակարդակների վրա կենսաթոշակի, ընտանեկան ու երեխայի նպաստների ազդեցությունը, 2009–2018 թթ.(%)⁵¹

Տարեթիվ	Մանկական աղքատության մակարդակ՝ առանց կենսաթոշակի		Մանկական աղքատության մակարդակ՝ առանց ընտանեկան նպաստի		Մանկական աղքատության մակարդակ՝ առանց երեխայի նպաստի	
	ծայր. աղք. գիծ	աղք. ընդհ. գիծ	ծայր. աղք. գիծ	աղք. ընդհ. գիծ	ծայր. աղք. գիծ	աղք. ընդհ. գիծ
2009	10.3	10.4	4.6	3.7	0	0.2
2010	10.5	12.1	6.8	5.0	0.3	0
2011	12.3	10.8	5.6	4.7	0.1	1.8
2012	8.7	6.9	5.1	1.0	0.4	1.0
2013	8.8	7.0	4.5	1.7	0	0
2014	7.8	6.5	3.8	1.2	0	0
2015	8.2	6.5	4.4	2.5	0	0.1
2016	8.2	4.7	3.6	1.6	0	0
2017	9.2	11.9	5.1	4.4	0.1	0.2
2018	9.3	12.3	5.5	4.5	0.2	0.1

Եթե կենսաթոշակները չներառվեին տնային տնտեսության ընդհանուր ամսական ծախսերում, և ստացված գումարը չհամարժեքացվեր, մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը 2018-ին կաճեր 9.3 տոկոսային կետով, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակը՝ 12.3 տոկոսային կետով (2018 թ. տվյալների համաձայն՝ երեխաների ընդհանուր թվի 42.3%-ը բնակվել է այնպիսի տնային տնտեսություններում, որոնց առնվազն մեկ անդամը ստացել է կենսաթոշակ): Այստեղից հետևում է, որ կենսաթոշակի մեծությունը կարևոր ազդեցություն ունի մանկական աղքատության

⁵⁰ Հաշվարկը կատարել են հեղինակները՝ ըստ ԱՐՄՍՍՍՍ-ի 2019 թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագրքով միկրոտվյալների բազայի:

⁵¹ Կազմել են հեղինակները՝ ըստ ԱՐՄՍՍՍՍ-ի տվյալների:

ցուցանիշների վրա: Հաջորդն իր մեծությամբ ընտանեկան նպաստն է, առանց որի ծայրահեղ աղքատության մակարդակը կաճեր 5.5 տոկոսային կետով, իսկ ընդհանուր մակարդակը՝ 4.5 տոկոսային կետով (2018-ին երեխաների ընդհանուր թվի 23.9%-ը բնակվել է այնպիսի տնային տնտեսություններում, որոնք ստացել են ընտանեկան նպաստ): Ուսումնասիրելով երեխայի նպաստի ազդեցությունը 10 տարիների կտրվածքով՝ կարող ենք փաստել, որ այն գրեթե ազդեցություն չի թողել մանկական աղքատության մակարդակի վրա՝ բացառությամբ 2011 թ-ի. մնացյալ տարիներին այդ ցուցանիշի ազդեցությունը տատանվել է հիմնականում 0.1–0.2-ի սահմաններում (2018 թ. տվյալներով երեխաների ընդհանուր թվի միայն 1.6%-ն է բնակվել երեխայի նպաստ ստացող տնային տնտեսություններում):

Այսպիսով՝ վիճակագրական պրակտիկայում կիրառվող մանկական աղքատության չափումը (գնահատումը) հիմնված է ընտանիքի նյութական անվտանգության մակարդակի վրա: Այնուամենայնիվ, երեխաների բարեկեցության մակարդակի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են երեխաների հիվանդությունը և մահացությունը, կրթության և դաստիարակության մակարդակը, առողջապահական ծառայությունների մատչելիությունը և մի շարք այլ գործոններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են երեխաների և դեռահասների կյանքի որակի վրա:

Եզրակացություններ: Ժամանակակից աշխարհի ամենահրատապ խնդիրներից մեկը մանկական աղքատությունն է: Մանկական աղքատությունը համընդհանուր երևույթ է և հավասարապես մտահոգիչ է ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: Մանկությունն այն ժամանակահատվածն է, որն իր ուրույն հետքն է թողնում անձի հետագա կյանքի ողջ ընթացքի վրա՝ հիմք դնելով հաջողությունների շարքի կամ առաջացնելով խոր «սպիներ», որոնք մշտապես հիշեցնելու են իրենց գոյության մասին: «Մանկական աղքատություն» եզրույթով ձևական բնույթ է ստանում երեխաների՝ օրենսդրորեն սահմանված կարգով արժանավայել կենսապայմաններ ունենալու իրավունքը, և երկրների կողմից ընդունված սահմանադրություններն ու օրենքները, համամարդկային արժեքները կարծես դառնում են սոսկ փաստաթղթեր ու գեղեցիկ ձևակերպումներ: Անապահով ընտանիքում ծնված յուրաքանչյուր երեխա ի սկզբանե դատապարտված է աղքատության ու գրկանքների:

Միջազգային փորձի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ համաշխարհային շուկերի հետևանքով մանկական աղքատության խնդիրն աշխարհում ավելի է խորանում: Ցավոք, նախկինում դրական արդյունքներ արձանագրած երկրները, որոնք տարիների ընթացքում մշակել և իրագործել են միջոցառումներ՝ ուղղված մանկական աղքատության մակարդակի կրճատմանը և գրանցել են դրական միտումներ, ներկայում կրկին կանգնել են նույն մարտահրավերի առջև և պայքարում են անհաղթահարելի թվացող այս հիմնախնդրի դեմ: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի գնահատումների՝ մինչհամավարակային ժամանակահատվածում գրեթե 1 միլիարդ երեխա ապրում էր բազմաչափ աղքատության պայմաններում՝ գրկված լինելով կրթական և առողջապահական ծառայություններից, բնակարանային նվազագույն պայմաններից, պարենային ապահովությունից, հիգիենայից և/կամ ջրից: 2020 թ. սեպտեմբերի տվյալներով բազմաչափ աղքատ երեխաների թիվն ավելացել է գրեթե 150

մին-ով՝ պայմանավորված COVID-19 համավարակի հետևանքներով: Աշխարհում գրեթե 356 մլն երեխա ապրում է ծայրահեղ աղքատության պայմաններում:

ՀՀ-ում աղքատության (այդ թվում՝ մանկական) հաղթահարումն ամենահրատապ հիմնախնդիրներից մեկն է, սակայն առ այսօր ոչ մի կառավարության չի հաջողվել գրանցել նշանակալի արդյունք, թեպետ տարբեր ժամանակահատվածներում մշակվել և իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, ընդունվել են մի շարք օրենքներ՝ նպատակ հետապնդելով աջակցելու անապահով ընտանիքներին ու երեխաներին: 2019 թ. ՀՀ-ում մանկական աղքատության ընդհանուր մակարդակը կազմել է 33.6%, սակայն, հաշվի առնելով COVID-19 համավարակի և արցախյան պատերազմի հետևանքները, կարծում ենք՝ այս ցուցանիշը դեռևս երկար ժամանակ կպահպանվի, անգամ կունենա աճի միտում, եթե արմատական բարեփոխումներ չիրականացվեն սոցիալական պաշտպանության համակարգում: Նկատի առնելով հիմնախնդրի սրությունը և կարևորությունը՝ կարծում ենք, որ պետական մակարդակով պետք է մշակել ազգային ծրագիր՝ մանկական աղքատության հաղթահարման ուղղությամբ:

Մանկական աղքատության մակարդակներն ըստ Երևանի և ՀՀ մարզերի դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ 2018-ին մանկական աղքատության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Շիրակում՝ 46.0%, Լոռիում՝ 38.4% և Գեղարքունիքում՝ 31.7%: 2018 թ. Կոտայքի մարզում հաջողվել է իսպառ վերացնել երեխաների ծայրահեղ աղքատությունը (2009 թ. մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 7.7%), սակայն աղքատության չափման նոր մեթոդաբանությամբ պատկերն այլ է և համադրելի չէ նախորդ ժամանակահատվածների հետ: Ըստ նոր մեթոդաբանության՝ մանկական ծայրահեղ աղքատության ամենաբարձր մակարդակները գրանցվել են Արագածոտնի (4.8%), Գեղարքունիքի (4.2%) և Շիրակի (3.4%) մարզերում:

ԱՐՄՍՍՍՍ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված միկրոտվյալների բազայի հիման վրա կատարված հաշվարկների արդյունքում պարզ դարձավ, որ 2019 թ. մանկական ընդհանուր աղքատության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Շիրակի մարզում՝ 64.8%, իսկ ամենացածրը՝ Սյունիքի մարզում՝ 16.4%: Մանկական աղքատության միջինից ցածր ցուցանիշներ են արձանագրվել Երևանում, Վայոց ձորում, Արմավիրում և Սյունիքում, մնացած մարզերում մանկական աղքատության մակարդակը բարձր է հանրապետական միջինից:

Վերլուծության արդյունքում ակնհայտ դարձավ, որ կենսաթոշակն ու ընտանեկան նպաստը կարևոր ազդեցություն ունեն մանկական աղքատության միջին մակարդակի վրա: Հետևաբար՝ պետությունը պետք է նշանակալի չափով վերանայի կենսաթոշակի ու ընտանեկան նպաստի մեծությունները: Սակայն հասկանալի է, որ միայն սոցիալական աջակցության վերոնշյալ ձևերը չեն կարող այս հիմնախնդիրը լուծել երկարաժամկետում. անհրաժեշտ են նաև կայուն զբաղվածության և համարժեք վարձատրության խնդիրների լուծմանն ուղղված համակարգային միջոցառումներ, ինչպես վկայում է միջազգային մասնագիտական գրականության վերլուծությունը:

Մանկական աղքատության հաղթահարման համար կարևոր է, որ այս հիմնախնդրով զբաղվեն բոլորը՝ անհատները, ընտանիքները, նախադպրոցական հաստատությունները, դպրոցները, բարեգործական հիմնադրամները (ազգային ու միջազգային), պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինները:

Բացի այդ, կարծում ենք՝ շատ կարևոր է նաև ծնողների՝ երեխաների հանդեպ իրենց պարտավորությունների կատարման գիտակցական մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ հոգ տանելով սեփական երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:

Մանկական աղքատության հաղթահարումը հոգեպես առողջ, զարգացած, կրթված և արարող սերունդ ունենալու կարևորագույն գրավականն է, ուստի դա պետք է լինի պետության առաջնահերթ խնդիրների լուծման շարքում:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն, փոփ., 2015 թ.:
2. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2002 թ., Վիճակագրական-վերլուծական զեկույց, ԱՐՄՍՍՍ, Եր., 2002:
3. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2016 թ., Վիճակագրական-վերլուծական զեկույց, ԱՐՄՍՍՍ, Եր., 2016:
4. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2019 թ., Վիճակագրական-վերլուծական զեկույց, ԱՐՄՍՍՍ, Եր., 2019:
5. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2020 թ., Վիճակագրական-վերլուծական զեկույց, ԱՐՄՍՍՍ, Եր., 2020:
6. ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշման հավելված, Կայուն զարգացման ծրագիր:
7. Дуэль А., Минимум по бедности, Сколько стоит победить нищету в России, <https://rg.ru/2020/07/26/elena-grishina-edinstvennyj-sposob-preodoleniia-bednosti-povyshenie-dohodov-grazhdan.html>
8. Детская бедность в Европе и Центральной Азии: определения масштабов, тенденции и рекомендации, ЮНИСЕФ, декабрь, 2017, <https://www.unicef.org/eca/media/3401/file/Child-poverty-regional-report-russian.pdf>
9. Индекс детской бедности и лишений в Кыргызской Республике, Национальный Статистический Комитет Кыргызской Республики, <http://www.stat.kg/ru/publications/indeks-detskoj-bednosti-i-lishenij-v-kyrgyzskoj-respublike/>
10. Айтенова Ш., Дети не в приоритете: что не так в политике сокращения детской бедности в Казахстане?, <https://ekonomist.kz/aitenova/deti-politika-sokrashcheniya-detskoj-bednosti/>
11. С. Huston A., Children in poverty: Can public policy alleviate the consequences? Fam Matters, 2011(87), <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3287293/?fbclid=IwAR0b5I1O810VpqAVYVWZaAMk1o63kBJbbGb5C3SN0M4r8WIK-vXnFwinTjA>

12. Minuji A., Delamonica E., Davidzuk A. and Gonzalez E., The Definition of the Child Poverty: a discussion of concepts and measurements; Environment & Urbanization Copyright © 2006 International Institute for Environment and Development, Vol. 18(2), <https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/0956247806069627>
13. Nolan A., Protecting the Child from Poverty: The Role of Right in the Council of Europe, 2019, <https://rm.coe.int/protecting-the-child-from-poverty-the-role-of-rights-in-the-council-of/168098c54c>
14. A Roadmap to Reducing Poverty (2019), Greg Duncan and Suzanne Le Menestrel, Editors Board on Children, Youth, and Families and Committee on National Statistics Division of Behavioral and Social Sciences and Education; A Consequences Study Report of the National Academies of Sciences. Engineering. Medicine, Part 3: Consequences of Child Poverty; The National Academic press Washington, DC, https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK547361/pdf/Bookshelf_NBK547361.pdf
15. Children at Risk of Poverty or Social Exclusion, Eurostat, Statistics Explained, data extracted in October 2020, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Children_at_risk_of_poverty_or_social_exclusion#Children_growing_up_in_poverty_and_social_exclusion
16. Fiala O., Delamónica E., Escaroz G. et al., Children in Monetary Poor Households: Baseline and COVID-19 Impact for 2020 and 2021. *EconDisCliCha* 5, 2021, <https://doi.org/10.1007/s41885-021-00086-3>
17. Gripes J., Walker R., The Costs of Child Poverty for Individuals and Society, A Literature Review, Joseph Rowntree Foundation, October, 2008, https://www.jrf.org.uk/sites/default/files/jrf/migrated/files/2301-child-poverty-costs.pdf?fbclid=IwAR1iYV9VhF6ypfWzTwDY9ic1w9nOHm3hZu8_Z4vz59SfLtV82z1x4MnvxAS
18. Westwater H., UK Poverty: the facts, figures and effects, July 1, 2021, <https://www.bigissue.com/latest/uk-poverty-the-facts-figures-and-effects/>
19. McLaughlin M., Rank M. R., Estimating the Economic Cost of Childhood Poverty in the United States *Social Work Research*, Volume 42, Issue 2, June 2018, <https://doi.org/10.1093/swr/svy007>
20. National Poverty Watch Report 2020; European Anti-Poverty Network France, 14 September 2020, https://www.eapn.eu/wp-content/uploads/2020/10/EAPN-EAPN-France-Poverty-Watch-2020_EN_final-4706.pdf
21. Worlds of Influence Understanding What Shapes Child Well-being in Rich Countries, UNICEF, 2020, <https://www.unicef.org/media/77571/file/Worlds-of-Influence-understanding-what-shapes-child-well-being-in-rich-countries-2020.pdf>
22. [https://canadianfeedthechildren.ca/the-feed/child-poverty-causes-and-effects/?fbclid=IwAR08r\)U8oxWRdela1oKk0m0NP7NBQZ\]kks8n90SYu8aQsbBBT6luA_u8W_40](https://canadianfeedthechildren.ca/the-feed/child-poverty-causes-and-effects/?fbclid=IwAR08r)U8oxWRdela1oKk0m0NP7NBQZ]kks8n90SYu8aQsbBBT6luA_u8W_40)
23. https://www.concernusa.org/story/causes-of-poverty/?fbclid=IwAR2MA0TrNVbcbWNC-zivV-J7gNrfeWe70k6kWAAt9B9pbsxLCEp07U05Y__M

24. <https://rg.ru/2020/07/26/elena-grishina-edinstvennyj-sposob-preodoleniia-bednosti-povyshenie-dohodov-grazhdan.html>
25. <https://www.unicef.org/social-policy/child-poverty>
26. <https://data.unicef.org/topic/child-poverty/covid-19/>
27. <https://cpag.org.uk/child-poverty/child-poverty-facts-and-figures>
28. <https://www.childrensdefense.org/policy/resources/soac-2020-child-poverty-tables/>
29. <https://www.childrensdefense.org/state-of-americas-children /soac-2021-child-poverty/>
30. <https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK547371/?fbclid=IwAR0nMnI5gr1dkpi6Ov3aeyXIEfPr52DxX0MFNh0le4dpBgH5ZDzgrdJ0pQc>
31. <https://www.unicef.org/media/77571/file/Worlds-of-Influence-understanding-what-shapes-child-well-being-in-rich-countries-2020.pdf>
32. https://link.springer.com/article/10.1007/s41885-021-00086-3?fbclid=IwAR1ca-95I3tBJPcrZqBdkuAiHRtqw_IKJPGHW19Uo2a8QLDP0sVcSu8G-w4
33. <https://www.unicef.org/armenia/%D5%B4%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B4%D5%AB%D6%81-%D5%B4%D5%A5%D5%AF-%D5%BF%D5%A1%D6%80%D5%AB-%D5%A1%D5%B6%D6%81-%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D6%80%D6%87%D5%B8%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6>

ЛУСИНЕ КАРАПЕТЯН

*Доцент кафедры бизнес администрирования АГЭУ,
кандидат экономических наук*

ЛИЛИТ ПЕТРОСЯН

*Член Государственного совета по статистике РА,
кандидат экономических наук*

Актуальные проблемы детской бедности и ее проявления в Республике Армения. – Статья посвящена исследованию проблем детской бедности. «Бедность» – болезненное явление, которое вызывает множество сложных проблем в социальном, экономическом и психологическом плане. Мир противостоит вызовам, одним из которых является детская бедность. На сегодняшний день ни одна страна в мире не нашла полного решения данной проблемы. Развитые страны в течение некоторого периода времени посредством активных социальных программ стараются сократить бедность, в том числе детскую, добиваются успеха, достигают желаемых результатов, но некоторое время спустя этот показатель может увеличиться под влиянием различных факторов. Наглядным подтверждением всего вышесказанного является COVID-19. В развивающихся странах все намного сложнее: дефицит финансовых ресурсов, несовершенные системы образования, здравоохранения, социальной защиты, высокий уровень безработицы, войны, эпидемии, катастрофы и т.д. Армения в этом отношении не является исключением. Наша страна пережила разрушительное землетрясение, арцахские войны, эпидемии т.д., в результате чего в Армении уровень бедности, в том числе детской, остается высоким. По данным Статистического комитета РА, в 2019 году каждый третий ребенок был бедным, что является тревожным показателем.

Ключевые слова: *детская бедность, эпидемия, депривация, многомерная и материальная бедность, крайне бедные, социальная изоляция, условия жизни.*

JEL: I32, P46

DOI: 10.52174/1829-0280_2021_3_74

LUSINE KARAPETYAN

*Associate Professor of the Chair of Business Administration of ASUE,
PhD in Economics*

LILIT PETROSYAN

*Member of State Council on Statistics of the RA
PhD in Economics*

Issues of Child Poverty and its Manifestations in the Republic of Armenia.– This paper focuses on the study of child poverty issues. The term "poverty" itself is a painful phenomenon which raises many complex problems in social, economic and psychological aspects. The whole world is struggling with this challenge, the most vulnerable of which is child poverty. To date, there is not a single country in the world that has found the "prescription" for its complete elimination. Developed countries are able to reduce poverty, including child poverty, for some time periods through active social programs, to achieve success regularly, desired results, but after a while, this index may rise again under the influence of various factors. COVID-19 is the proof of that. Everything is much more complicated in developing countries; there is a lack of financial resources, imperfect educational, health and social protection systems, high unemployment, wars, epidemics, disasters, etc. The RA is not an exception in this respect. Our country has seen destructive earthquakes, Artsakh wars, epidemics, etc., as a result of which the rate of poverty, including child poverty, still remains high in Armenia. According to the Statistical Committee of the RA, in 2019 every third child was poor, which is a worrying indicator.

Key words: *child poverty, epidemic, deprivation, multidimensional and material poverty, extremely poor population, social isolation, living conditions.*

JEL: I32, P46

DOI: 10.52174/1829-0280_2021_3_74